

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան
100 Դրու

Վեցամսեայ
50 Դրու

Պրոս. Ե. Պատ. Տնօրէն
ԲԻՅԸՐ ԳՈՒՅՈՒՄՃԻԱՆ

Հասցէ

ՊԱՔՐՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Գրասենակ

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏՈՒՆ

Հասը 5 Դր.



ՊԱՏՐԱՍ

ARMENIAN

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ ԻԶՄԻՐԻ ՀԱՅ ՊՕՅ-ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ

BADRASD

Organe des Boy-Scouts Arméniens.
de SMYRNE

ΜΗΑΔΡΑΣΤ

ΟΡΓΑΝΟΝ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΠΡΟΣΚΟΠΩΝ
ΣΜΥΡΝΗΣ

ՆԵՐԿԱՅ ՄԱՆՈՒԿՆ Է ԱՊԱԳԱՅ ՄԱՐԴԵ

ABONNEMENT

Annuel
10 Frcs.

Six-mensuel
5 Frcs.

Direct. et Ger. Resp.
PETER COUYOUMDJIAN

Adresse
BAKIRGIAN FRÈRES

Bureaux
SCOUT-ROOM ARMEN.

Հասը 5 Դր.

Այն Եւրոպայի շուրջը, որտեղ ապրում են
քրիստոնէական համայնքները, ունեն
անհրաժեշտ է իրենց մէջ ունենալ նաեւ
հայտնաբերելու սկստիկական
տուրք խորհրդածութիւնները
կուսակցութեան:

Ն. Վ. ՃՕՐՃ ԹԱԳԱՒԱՐ

Շատ գոհ եմ տեսնելով սկստական
կան իրարայրակցութեան տարածումը
Մենք իրարայրակցութեան գոյնը գտնուող
երկրներում մէջ ալ:

Կը մաղթեմ կարելի յաջողութիւն
մը այն ջանքերուն մէջ զորս սկստական
տիպեր ի գործ կը դնէ երկրաստորագրու
թեան զարգացման և համերաշխութեան
համար և որ կը կազմէ ապա-
գայ Միջազգային ամուր խաղաղու-
թեան մը երաշխիքը:

(Ստոր.) ՃՕՐՃ

Ն. Վ. ԹԱԳԱՒԱՐ ՊԵՆՃԻԳԱՅԻ

Այն եղբայրակցութեան ձեռնարկը
զոր կը հետապնդեն՝ երկրաստորագրու
թեան բարոյական և ֆիզիքական
զարգացման համար նուիրուողները
աշխարհի բոլոր պետերէն քաջալեր-
ուելու արժանի է:

Սկստականները ղեկավարներուն կ'ու-
ղարկեմ ջերմ մաղթանքներս իրենց
ճիգերուն յաջողութեան համար:

(Ստոր.) ԱԼՊԵՐ

Ն. Վ. ԹԱԳԱՒԱՐ ՍՊԱՆԻՈՅ

Կու գամ աշխարհի սկստականներուն
մաղթել ամենամեծ յաջողութիւն մը
իրենց ազնիւ ճիգերուն մէջ, որպէս
զի կարենան իրագործել այն բարեկա-
մութեան և համաձայնութեան յարա-
բերութիւնները որոնցմէ կախում ու-
նի ազգերու երջանկութիւնն ու խա-
ղաղութիւնը:

(Ստոր.) ԱԼՊԵՐՍՕ



ՍԿԱՈՒՏԸ ԶՈՒԱՐԹ Է

Սկստականները մենք

Միշտ ուրախ զուարթ ենք

Սկստականները մենք

Միշտ ուրախ զուարթ ենք

Կը խաղանք կը խաղանք միտ ու բոլորս զը ուրախ ենք

Հա՛ հա՛ հա՛ հա՛ հա՛ հա՛ հա՛...



ԲԵՂՍՆԱԻՐ ՀՈՒՆՁՔԸ՝

ՄԻԱՅՆ ՍԿԱՈՒՏԻԶՄՈՎ

Երբ գարնանային գեղամիծայ ե-
ղանակին հետ ծառերը պարզարուին ու
բարեկարգ ծաղիկներով, պարտիզայնը
կը հրճուի ի տես անոնց, ապագայ ա-
ռատ պտղաբերութեան մը յոյսով գի-
նովցած:

Հայ սկստականներ, դուք այդ բոլոր-
նաւոր ծաղիկներն էք, որոնց արեւոտ
փթթումէն կախում ունի Ազգին մե-
ծութիւնն ու փառքը:

Եւ ի՞նչ ճամբով արդեօք կարելի է
այդ պատանիները անխնայ առաջնոր-
դել մինչեւ իրենց հասունութիւնը՝ ե-
թէ ոչ միմիայն սկստականութեամբ, և թէ
այդ սկստականները պատանի իր
մանկուցական վիճակէն՝ բարոյական և
ֆիզիքական ուրոյն մէջութեանով,
իսկական իմաստով ապագայ ճշմա-
րիտ մարդը պատրաստելու գորու-
թիւնն է, որուն յաջողութեան հա-
մար ամէն ջանք և զոհողութիւն չեն
խնայեր անոր առաքեալները:

Իսկ դուք ի՞նչ պիտի ընես հայ ըս-
կական:

Դուք պիտի հետեւիս հետեւեալ ե-
րեք խրատներուն զորս քեզ կուտայ Ան.

Պիտի պահես Հայրենիք, եկեղեցիդ
եւ եւդ՝ բարոյապէս և ֆիզիքապէս:

Պաշտէ՛ հայրենիքդ և հպարտ ե-
ղիր իբր հայ՝ կարենալ տեսելու հա-
ւատքովը զօրացած:

Պաշտէ՛ զԱստուած և հպարտ եղիր
Հայ եկեղեցի մը ունենալուդ համար:

Պատրաստէ ինքզինքդ բարոյապէս
ուղիղ, մտաւորապէս արթուն և ֆի-
զիքապէս ուժեղ, բայց միշտ յիշէ
Սօկրատի «Ծանիր զիցք»ը:

Հայ սկստականներ Հայրենիք և Ազ-
գը ձեզի՛ք կը սպասեն Բեղմնաւոր հունձի
մը իրենց ապագային համար:

Պատրաստ! ահա ձեր իսկական նը-
շանաբանը որուն ճշմարիտ կիրարկու-
մովը խանդավառ՝ և սկստական
գաղափարներով տոգորուած՝ առանց
ցոյցերու և ցուցամոլութիւններու,
մտադրեցէք ըլլալ ապագայ Հայ ազ-
նիւ քաղաքացիները:

ԶԱԻԷՆ ՅԱԲԵԹԵԱՆ

ԽՐԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՉՄԸ

Թերևս ոմանք ներկայ մեր վերնագրին ի տես մտածեն թէ արդեօք սկառաւորութեամբ քանի մը տեսակ է, թէ կան զատ զատ ուրոյն գրութիւններ, և վերջապէս եթէ գոյութիւն ունին ասոնք ապա ուրիմն ո՞րն է մերը, ի՞նչպէս պիտի գտնենք ուղիղ ճամբան՝ ի խնդիր սկառաւորական նպատակակէտին:

Ո՛չ, այսպիսի մտածում չփոթ է ու անել որուն կարելի չէ պատասխանել քանի որ այդ կը նշանակէր մենք մեր մէջ հակասական ըլլալ և ոչ հետեւողական սկզբնական գրութեան՝ որ ինքնիրմով տնտեսականի մամողութիւն մ'է:

Սկառաւորութեամբ մահաբեր չի փոխեր իր հիմքը: Ան նոյնն է ու կը դաւանի որպէս միեմ գաղութիւնը, որուն ծնունդն ենք մենք, ու մեր խնդիրը ոյժերը ախտի արժեքներն անկաշկանդ՝ անոր ազատ ծոցին մէջ՝ ուր մեր տեսողութիւնը լայն հորիզոն մը պիտի ընդգրկէ, մեր անգամները պիտի գործեն, պիտի գործէ և մեր միտքը ունենալով՝ խորախորհուրդ տաճարին՝ լուսնի շողարձակումովը յառաջացած խտրտացումը իբրեւ գրգռ և մեկնակէտ:

Պէտք չէ մոռնալ սիրտը՝ տղու սիրտը որ հրապուրիչ ընկերականութեան մէջ պիտի սորվի՝ սիրել իր ընկերը, սիրել իր նմանները, պիտի մշակէ բարիք և գեղեցիկին սերմերը. պիտի աճեցնէ, ու աճացնէ զանոնք և ջանայ տարածել իր շուրջիններուն, իր ազգին անգամներուն վրայ:

ՍԿԱՌԻՏԸ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՊԵՏԻ Է ԸԼԼԱՅ, ասիկա քաջարձակ է մեր օրինագրքին մէջ, և կ'երգունք անոր համար:

Բայց թէ գաղափար մը որ զգացում չէ եղած, այսինքն չէ սիրուած որեւէ կերպով, անիկա ոչ խոստումով և ոչ ալ երգումով կ'իրագործուի: Հայրենիքը կը օրէ մարդ երբ անոր մէջն է ու անոր լեռներն ու ձորերը ընտանի են իւրեն, իր հոգիին մաս կը կազմեն. այսպիսի է պարագայն անոնց որոնք կ'ապրին իրենց միեմ տան՝ հայրենիքին մէջ, մինչ մինք հեռու ենք մեր երկրէն օտար ափունքներու վրայ թափառական՝ դարերէ ի վեր հալածուած ամէնադժպէս միջոցներով, ու կը գալարուինք գոյութեան մեծագոյն և գրեթէ վերջնական այս կռիւին յաղթահարելու մեր ճիգին մէջ: Այո՛, ասոնք են քանի մը խօսքով մեր պայմանները, եւ Պէյտըն Բաուէլ ըսած է.

«Սկառաւորութեամբ իւրաքանչիւր երկրի եւ ազգի պայմաններուն պէտք է պատշաճեցնել»:

Այո՛ գիտենք թէ չպիտի փոխենք, այլ պիտի պատշաճեցնենք, և ասիկա կ'ըլլայ մեր տեսակէտով, հետեւեալ միջոցներով.—

- 1— Պատանի գիտակ դարձնել առաւելապէս Հայ պատմութեան.
- 2— Անոր մէջ ջանալ ապրեցնել հայու զգացումը.
- 3— Հայաստանէ դուրս՝ այլուր միշտ ինքնին օտար եւ պանդուխտ նկատել.
- 4— Սիրեն ու միտք մօտեցնել Հայաստանի անով ուրախացնել եւ խորացնել:

Ահա ճակատագրականօրէն Հայ սկառաւորութեամբ կ'առնէ իր որոշ դրոշմը վերոյիշեալ պայմաններու ազդեցութեամբ և կ'ընդգրկէ միջոցներ որոնց պէտք է հետեւիլ աներկբայ և անսպառ:

ՃԻՄ ԳՕՐԻԻ ՍԱՐՍԱՓԸ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՐԿԱՄԱՆԿՐԱԿԱՆ ՎԷՊ

Գրեց՝ Mortimer Batten

I

Ճիմ Գորի սկառաւորական բանակի մը արձանագրուած էր: Այսպէս առիթ կ'ընծայուէր իրեն զբօսնուլ՝ դըդեակին շուրջ, բանակիլ՝ լիճին եզերքը. Ասոնք այնպիսի հաճոյքներ էին իրեն համար որոնք մնասէ մը աւելի՝ շահեր կը խոստանային:

Բայց ան՝ իր միջոցներուն համապատասխան սկառաւորութիւն մը կարողացած չէր ընդգրկել. գուցէ բարի

սկառաւոր մ'ըլլալու առիթը ունեցած չէր երբեք:

Ճիմ՝ իր հօրը նման գաղտնի որսորդ մ'էր, զորս պարզապէս կը խոստովանէր. մանաւանդ շատ հպարտ էր ձկնորսի երեքժամին գործածելու իր ճարտարութեան համար:

Երեքժամին չուանի մը ծայրը կապուած ուտք մըն է, պահպանուած երկու կամ երեք կոր ճանկերով: Այս գործիքով Սկովտիոյ գետերուն մէջ ձկնորսութիւնը խստիւ արգելուած է: Բայց Ճիմ զուակն էր ընտանիքի մը որ ոչ մէկ յարգանք կը տածէր օրէնքներու հանդէպ:

Գարնան՝ երբ Ճիմ նոր հեծելանիւ

մը գնեց, բոլոր ժողովուրդը իրաւամբ կ'ըսէր թէ ան՝ գաղտնի ձկնորսութեամբ դրամ շահած էր:

Քանի մը օր վերջ խմբապետը հաւաքեց իր սկառաւորները և ըսաւ անոնց.

— «Տղա՛քս, տառը տարաւայ բացակայութենէ մը վերջ, արծիւները վերադարձած են բնակելու Պեննսիլվանիա ձուներէն: Արծիւները ներկայիս այնքան հազուագիւտ են որ օրէնքը չանոնք կը պաշտպանէ. քաղաքապետը շատ գոհ մնացած է անոնց գալուստէն. բայց շատ դիւրամտ չիլի է և գաղտնիները կրնան հակիրթները կամ ձագոճկները գողնալ: Քաղաքապետին ըսի որ սկառաւորները պիտի օգնեն իրեն բայց հակելու համար և թէ կրնայ մեկ կանչել պէտք զգացած ժամանակ, վստահ եմ թէ ամէնքդ իմ կարծիքէս էք և պատրաստ՝ այս խիստ հետաքրքրական պարտականութեան ձեռնարկելու»:

— «Բնականաբար» պատասխանեցին ամէնքը:

Քաղաքապետը շատ բարի եղած էր սկառաւորներուն հանդէպ և հրապուրուած էր տեսնելով կրկին թռչուններու Արքան՝ շրջակայքի բարձունքներուն վրայ:

Պատասխանը հաստատական էր. բայց Ճիմ ոչինչ ըսաւ: Իրեն համար արժէք չունէր արծիւին բոյն շինելը ոչ իսկ հաճոյք մը կ'ուզէր առթել քաղաքապետին:

— «Ի՞նչ պէտք, երթալ պառկիլ ժամերով թաց խոտին վրայ արծիւները հսկելու համար, գոչեց.

— Է՛հ, լաւ! մի՛ երթար, պատասխանեց ընկեր մը, արդէն շատ դիւրին կերպով կարող ես կատարել այս պաշտօնը, քանի որ հեծելանիւ ունիս, մինչդեռ մենք պարտաւոր ենք քալել:

— Եթէ այդքան տպուչ էք, հոգս կրկնեց Ճիմ. թողէք որ արծիւները ինքզինքնին հսկեն»:

Խմբապետը այս խօսակցութեան տեղեկանալով կանչել տուաւ Ճիմը:

— «Եթէ չես ուզեր պարտականութիւնդ կատարել, պատճառ մը չիկայ որ սկառաւոր մնաս. կը դիտեմ որ միայն հաճոյքի համար մեզի կ'ընկերանաս:

— Ոչ մէկ փափաք ունիմ սկառաւոր ըլլալու, գոչեց Ճիմ, դուք ոտիպեցիք զիս ըլլալու համար:

— Ուրիմն հեռացիր սկառաւորութենէ եթէ ինձի հաճոյք ընելու համար է որ ընդգրկեցիր զայն:

(Շարունակելի)

Դիմեցէ՛ք «Արարա» Գրաստանը գնելու համար «Հայ Սկառաւ»
5 դրուէր փոխարէն

ԻՆՉՊԷՍ ԶԱՐԴԱՐԵԼ
ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Եթե քանակի մը հաւաքուողին, ալիս ակ-
արկ մը պիտի քաշէ գաղափար մը տալու հա-
մար այդ քանակին գործունէութեան եւ կար-
ողական ոգիին վրայ:

Ինչպէ՞ս զարդարել սկստական Տուն մը:
Գաղափար մը տալու համար առողջ շուրջ
ընկալուի՝ պիտի ներկայացնենք Պէրլիգայի
ուսուցչին հաւաքուողը:

Մտքը ընդարձակ է եւ յուսաւորում:
Երկրը ծածկուած է սաւաքով: Մոտիկ դը-
նան ձիւղ դիմաց կանգնած է մեծ դարան մը
ի խորշերով: Իւրաքանչիւր խորակ ունի իր
անկանակ խորշը ուր կը պահուին վրաններ,
կացիները, քիւրը եւ այլն: Սկստական
խայթերը շարունակ են վանդակի մը ետեւ:
Պատերը՝ միւս կողմ խորշերէն 1/3ը
ներկուծ են կանանցով, իսկ մնացեալ մա-
լը՝ ձեռնակ կիւրով, որուն վրայ գծուած են
անազան նկարներ:

Մարդկայնութեան քանի մը պատկերներ,
սկստական յուսանկարներ եւ գծագրու-
թիւններ կը կազմեն սրահին հետաքրքրաշարժ
արդարանքը:

Սեղաններն անգամ նախնական մեծով մը
ը գործածուին: Անոնց վրայ գծուած են հան-
դաններ, հետախուզական նշաններ, Մօրսի
այրուրէնք եւ այլն: մեկ խօսքով ամէն ինչ որ
սկստէ մը պարտաւոր է գիտնալ կամ սորվիլ:
Ճոխ գրադարան մը սկստներուն կ'ըն-
ծայէ դաստիարակիչ եւ հետաքրքրական զրո-
ւանք մը: Չեղունը զարդարուած է դրօշներով:
Եւ այս ամէնի վրայ կը ձգուին Թի-
սուի ժայռուն պատկերը, որ կարծես սկստ-
ները կը հրաշքի աղօթքի, աշխատանքի եւ կը
իշխեն իրենց խոսքով:

«Պոյ-Սկստ»

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ
ՄԻՋՈՂԳՈՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Վերջնականապէս որոշուեցաւ որ
յառաջիկայ սկստական Միջազգային
Համաժողովը տեղի ունենայ Բարիզի
մէջ 1922 տարւան Օգոստոս ամսոյ ա-
ռաջին շաբաթը:

Ցարդ պաշտօնապէս արձանագրու-
ած ամէն մէկ կազմակերպութենէ
հինգական ներկայացուցիչ պիտի մաս-
նակցի: Որոշուեցաւ նիստ մը յատկա-
ցնել նոր կազմակերպութիւններու ար-
ձանագրութեան խնդրագիրները քն-
նելու համար: Այս վերջիններէն ալ
քանի մը ներկայացուցիչներ ելին փա-
փաքին՝ ներկայ պիտի ըլլան համաժո-
ղովին՝ իրենց առաջարկները ներկա-
յացնելու համար:



ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՉՄԸ
ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

(Սեփ. քրքրակցութիւն)

Աղեքսանդրիա և Գահիրէ գլխա-
ւոր կեդրոններ են Եգիպտոսի սկա-
ռական համազգային և հայկական
ընկերակցութիւններու: Գահիրէի մէջ
Հայկական Առաջին սկստական ըն-
կերակցութիւնը հաստատուած է 1914
ին որմէ տարի մը վերջ հիմնուած է
ուրիշ մը Աղեքսանդրիոյ մէջ «Կամք»
Մարմնամարզական Ակումբին վար-
չութեան ղեկավարութեամբ:

Սոյն հայ սկստական ընկերակ-
ցութիւնները իրենց փայլուն շրջանին
տարեկան 25 բանակումներ և ար-
շաւներ կատարած են, Անգլիացի և
օտար զինուորականներու հիացման
առարկայ դառնալով:

Աղեքսանդրիոյ հայ սկստները
կը մասնակցին Աղեքսանդրիոյ հա-
մազգային սկստներու ժողովին: Այս
վերջինը քանի մը ամիս առաջ որո-
շեց պատրաստել Եգիպտոսի համար
սկստական կանոնագիր մը որուն
իւրաքանչիւր սկստական ընկե-
րակցութիւն պարտաւոր է հնազան-
դիլ: Այս կարգադրութիւնը մասնաւո-
րապէս եղած է տեղացի Արաբներու

համար որոնք 5-6 սկստական ըն-
կերակցութիւններ ունին մինչև 25-30
տարեկան երիտասարդներով:

Եգիպտոսի հայ սկստներու 5-6
տարւայ գործունէութենէն ակնկալ-
ւած մեծ արգիւնքին տնտեսութեան
պատճառներն են. Ա.— 1-2 տարին քա-
նի մը անգամ խմբապետի փոփոխում,
Բ.— Վարչութիւններու անձեռնհա-
սութիւն և Գ.— Սկստական փոփ-
ոքի քերթի մը չզոյլութիւնը:

Ուրեմն ոյժ ցանկ սկստական եւ
մարմնամարզական քերթերու տարած-
ման, որոնք միայն կարող են պատ-
րաստել նոր սերունդ մը վեհ գաղա-
փարներով և սկզբունքներով որ ար-
ժանի ըլլայ կոչուելու հայ ապագայ
ազնիւ քաղաքացին:

Ս. ՍԻՐԱՔԵԱՆ

ՎԱՀՐԱՄ ԳՊՐԶԼԵԱՆ
ԲԱՍԱԺ ԳՈՒՅՈՒՄՆԵԱՆ ԲԻՐ 38
(Ֆրանկաց Թագ)



Կը պատրաստէ նուրբ և յատկ փո-
րազըութիւններ, Վաճառականական
կնիքներ, զլիշներ, անանիսներ, մո-
նօկրումներ և այլն:

Կը պատրաստէ ամէն կերպ ոսկեղէն և
արծաթեղէն գործեր, նուրբ և ճաշա-
կաւոր:

Վաճառատան մէջ կը զտուին նա-
և փխքալ ակնոցներ, ալաղան տե-
սակներով, փիւմե պլու և այլն:

Ապագրանքներ՝ խնամեալ
Գիւնէր՝ խիստ աժաճ

ՏՊԱԳ. ԳԵՐԵՆԵԱՆ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳԵՐԵՆԵԱՆ

Առաջիկայի մը քաղաքները յափել:
Առեփ սկստական եւ կամ ուրիշ
գաւազան մը եւ զայն ուղիղ բռնեցիք առե-
ւում դիմ: Չափեցիք շուրջին երկայնութիւնը
և քաղաքացիք զայն գաւազանին երկայնու-
թեան հետ, (այսպէս, ըսենք որ գաւազանին եր-
կայնութիւնը 2 մէթր է, իսկ շուրջինը 1 մէթր.
ուրեմն քաղաքացիները կրկինը պիտի ըլլայ:
Եթեոյ մեր փափաքած առաջիկային շուրջին
երկայնութիւնը չափեցիք: Օրինակի համար
էթէ 5 մէթր է, ուրեմն առաջիկային երկայ-
նութիւնն ալ կրկինը պիտի է ըլլայ, այսինքն
10 մէթր:

ՍԿԱՌԻՏԻՉՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

Հօնտօնի Միջազգային Գրասենեա-
կը աշխարհի բոլոր սկստական կազ-
մակերպութիւններուն կը յայտարարէ
թէ՝ այն սկստները որ օտար երկիր-
ներ ճամբորդել կը փափաքին, Մի-
ջազգային Համաժողովին որոշման հա-
մաձայն, պարտաւոր են յանձնարա-
րական գիր մը ունենալ իրենց կազ-
մակերպութեան կեդրոնէն:



ՄԱՐԶԱՇԻԱՐԷ



Առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ

ՓՈԽԹՊՈԼԸ ՍԵՐ ՄԷՋ

Անցիալ Կիրակի, 4 Դեկտ. կէսօրէ վերջ ժամը 3ին «Բանիօնիօս»-ի դաշտին մէջ տեղի ունեցաւ Փոխթպօլի մրցում մը Հայկական Ա. և Պուրնօ-վայի Անգլիական խումբերուն միջև:

Հակառակ անձրեւոտ օդին, խաղը շարունակուեցաւ մեծ ոգեւորութեամբ որ վերջացաւ Հայկական խումբին յաղթանակով 3ի դէմ 2 կօլով:

— Նոյն օրը նոյն դաշտին վրայ ժամը 1,45ին տեղի ունեցաւ ուրիշ մրցում մը ընդմէջ Հայկական Բ. և «Բանիօնիօս»-ի խումբերուն որոնք Օր դէմ Օ կօլով հաւասար հանդիսացան:

— Հայ Ակումբի նախաձեռնութեամբ Միջազգային Փոխթպօլի գօմիքէն վերջնականապէս կազմուեցաւ հետեւեալ ակումբներու ներկայացուցիչներէն. — Հայ Ակումբ, Աքօրօն, Բանիօնիօս, Պուրնօվա եւ Երկաթուղիներ:

Փօմիթէին առաջին ժողովը տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ օր և միաձայնութեամբ որոշուեցաւ ընդունիլ Հայ Ակումբը իբր կեդրոն՝ Միջազգային գօմիթէին. նոյնպէս տոննապետ ընտրուեցաւ Պ. Մ. Եանրգեան:

Մրցումները պիտի սկսին ամսոյս 23ին (Ն. Տ.): Յայտագիրը յաջորդ ժողովին պատրաստուելով պիտի հրատարակուի:

Աքօրօնի Ակումբը որ քստակ մը կը նուիրէր այս տարւոյ մրցումներուն համար, կը նուիրէ նաեւ պատուանշաններ շահող խումբին խաղացողներուն:

«ՊԱՏՐԱՍ»-Ի ՔԵՐԹՈԼԸ ՔԻԻ 3

ՓՈԽԹՊՈԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ

(ՅԱՐԱԿԻՑ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ)

Դրեց. Մ. ԵԱՆՐԳԵԱՆ

ՕՐԵՆՔ 2

(Ամփոփում)

Խաղին տեւողութիւնը 90 վայրկեան է. կօլերու ընտրութիւնը վիճակով կը կատարուի և խաղը կ'սկսի դաշտին կեդրոնէն, գնդակը զարնելով դէպի հակառակորդ կօլին ուղղութեամբ. հակառակորդները կը կենան իրարմէ 10 հարտա հեռու:

Բացատրութիւններ. — խաղին 90 վայրկեան տեւողութիւնը բաժնուած է 2 հաւասար պահերու, 5 վայրկեան միջնադարով մը. բացառիկ պարագաներու տակ կարելի է համաձայնու-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԽԱԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Իզմիրի եւ Գօրտէլիօի Ա. խումբերուն վերջին մրցման առթիւ յառաջ եկած անհամաձայնութեան մը պատճառաւ, Հ. Ա. Մ. Ճ. ի վարչութեան միջամտութեամբ եւ կարգադրութեամբ, վերոյիշեալ 2 Ա. խումբերը պիտի խաղան 2 պարզ մրցումներ, որոնց երկուքին մէջ ալ եթէ Գօրտէլիօ յաղթէ, հայկական Ա. գաւթի այս տարուան մրցումները կրկին պիտի խաղացուին:

— Անցիալ Կիրակի առաւօտ տեղի ունեցան հետեւեալ 2 մրցումները.

Որքանոց-Իզմիր Բ. Որքանոցը յաղթեց Օր դէմ 1 կօլով, Գօրտէլիօ-Գարաթաշ. Գօրտէլիօ յաղթեց Օր դէմ 1 կօլով:

Մրցումներու արդիւնքը

Գօրտէլիօ խաղացած 4 մրցում	=	8 Նիշ
Որքանոց	>	4 > = 5 >
Գարաթաշ	>	4 > = 1 >
Իզմիր	>	3 > = 0 >
Իզմիր Բ.	>	1 > = 0 >

Հ. Ա. Մ. Ճ. ի վարչութեան

Քարտուղար՝

ՕՀԱՆ ՕՀԱՆԵԱՆ

ՓՈԽԹՊՈԼԻՍՏԻՆ ՍԻՆԱԿԸ

(Հարցումները պէտք են ուղղել Պ. Մ. Խանրգեանի «Պատրաս»-ի միջոցաւ)

Հ. — (Ջարեմ) — Բէնըլթի քիքի մը ժամանակ զնդակը կօլի ձողին զարնուելով եւ կուգայ դէպի նոյն խաղացողը. Այսպիսի դէպք մը կը պատահի քօրնը քիքի պահուն: Կը հաճի՞ք շուսաբանել:

Թեամբ մը աւելի կարճ ժամանակ մը սահմանել, եթէ ուէ մրցում վճռական հանգամանք ունի կարելի է նոյնպէս խաղը 30 վայրկեան երկարաձգել — բաժնուած 15րդեան վայրկեան պահերու — պայմանաւ որ իրաւարարին տեղեկութիւն տրուի:

Խաղը կ'սկսի ոչ թէ սուլիչին փնջելով՝ այլ գնդակին դաշելով. խաղին սկզբնաւորութեան գնդակը անպայման դէպի հակառակորդ կօլի ուղղութեան պէտք է զարնել. հակառակ պարագային գնդակը կրկին պէտք է զարնել որուն համար պատիժ չի տնօրինուիր:

Վիճակով շահող կողմը ազատ կատարել կօլերու ընտրութիւնը և կամ խաղին սկզբնաւորութիւն տալը: Սուվորաբար փորձառու խմբապետներ կօլերու ընտրութիւնը նախամեծար կը համարեն, նկատի առնելով հովին

Պ. — Երկու պարագաներուն ալ գնդակը զարնողը չկրնար կրկին զգչիլ անոր. հակառակ պարագային պէտք է ֆրի քիք շնորհուի հակառակորդ խումբին:

Հ. — (Դաւիթ) — Խաղացող մը օրինաւոր ձեւով վար կը ձգէ հակառակորդ մը. իյնողը խորհելով քէ ապօրէն երէցածը, կից մը կուգայ. ի՞նչ պէտք է ընէ իրաւարարը:

Պ. — Առանց հարցանումեան դուրս պէտք է վտարէ կից տուողը:

Հ. — (Դաւիթ) — Եթէ ապօրէն ձեւով վար անհեշտ, իյնողը ելլէ եւ կից սայ, ի՞նչ է իւրաքանչիւրի պատիժը:

Պ. — Երկուքն ալ դուրս պէտք է վտարուի. Առաջինը ապօրէն արարքի մը՝ իսկ երկրորդը, ոտնակոխ ըրած ըլլալուն համար իրաւարարին իշխանութիւնը — անժամը գործադրելով պատիժը —

Հ. — (Ջարեմ) — Ի՞նչ է օրէնքը իրաւարարներու մասին:

Պ. — Իրաւարար մը պէտք է՝ քաջամտու ըլլայ օրէնքներուն եւ անոնց ճշգրիտ իմաստին, եւ պէտք է բերանացի քննութեան ենթարկուի. Ան պէտք է՝ որ 21 տարեկանէն վար եւ կամ 40 տարեկանէ վեր ըլլայ. Ուէ է անմ որ ակնոց կը գործածէ իբր իրաւարար չի կրնար քննութեան մասնակցիլ: Թեկնածու մը որուն քննութիւնը անյաջող կը իկառուի, կրնա կրկին իր քննութիւնը երեք ամիս վերջէ իրաւարար պէտք է նսեւ գոյնեղու գաւազանութեան եւ աչքի տեսողութեան քննութեան ենթարկուի:

Հ. — (Յարութիւն) — Եթէ խաղացող մը անկիրք վերաբերում, եւ կամ անհարգական խօսքեր արձայնէ իրաւարարի հասցէին, ի՞նչ է պատիժը:

Պ. — Առաջին անգամին ազդարարութիւն, իսկ երկրորդին՝ դաշտէն արտաքսում: Հայնոյանքի պարագային՝ առաջի առնիլ անմիջական արտաքսում:

ուղղութիւնը և կամ արեւուն ճառագայթները:

ՕՐԵՆՔ 3

Դիրքերը կը փոխուին որոշեալ ժամանակամիջոցին կէսին: Միջնադարը 5 վայրկեանէն աւելի ըլլալու չէ առանց իրաւարարին հաւանութեան: Կօլ մը ըլլալէն վերջ կորսնցընող կողմի կ'սկսի խաղը:

Բացատրութիւններ. — Օրէնքը միայն 5 վայրկեան կը տրամադրէ միջնադարի հանգստին համար, իրաւարարին արտօնութիւն տալով այդ միջոցը երկարաձգել իթէ կարելոր պատճառ մը գոյութիւն ունենայ: Այն պարագայի տակ իրաւարարը խտապահանջ ըլլալու է խաղացողներուն հանդէպ որպէսզի ժամանակին գտնուին իրենց դիրքերը:

(Շարունակելի)